



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

Հաղորդակցության կրտսեր մասնագետ, հաղորդակցության բաժին

Communications Junior Specialist, Communications Unit

[«Այբ» դպրոց](#) | Լրիվ դրույք | Երկարաժամկետ, երեքամսյա փորձաշրջանով

[Թբիլիսյան խճ. 11/11](#), Երևան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ հունվարի 25

Պաշտոնի նկարագրություն

Մեր մեծ և բազմազան համայնքն «Այբ»-ի գործունեությանը ծանոթանում է հաղորդակցության բաժնի աշխատանքի միջոցով: Մեր գործն է տարածել «Այբ»-ի գաղափարները, արժեքներն ու մշակույթը և մարդկանց միավորել կրթության գերազանցության առաքելության շուրջ:

Հաղորդակցության մասնագետը պետք է «Այբ» դպրոցում իր աշխատանքն ընկալի որպես «կենսակերպ» և դառնա «Այբ»-ի արժեքների ու առաքելության տարածող՝ այս նպատակի համար իրականացնելով բազմազան գործունեություն:

Մասնագիտական և անձնային պահանջներ

- Ապահովել «Այբ»-ի բրենդի տարածումը և ճշգրիտ կիրառումը հաղորդակցության բոլոր միջոցներով
- Արդյունավետորեն գործածել զանազան սոցիալական ցանցերը՝ դրանցում «Այբ»-ի գործունեությանը հաստատելու և «Այբ» համայնքի հետ շարունակական կապ պահպանելու համար
- Արդյունավետորեն կառավարել կորպորատիվ և/կամ համայնքային կայքերը (պատրաստել լրատվական ու բլոգային գրառումներ, հոդվածներ և այլ նյութեր)
- Ըստ պահանջի՝ համակարգել տեղական և սփյուռքի ՉԼՄ-ների հետ հարաբերությունները
- Մասնակցել հանրության հետ կապերին առնչվող տպագիր, առցանց հրատարակվող և այլ տիպի նյութերի ստեղծման աշխատանքներին
- Կատարել կայքի հիմնական բովանդակության և օգտատերերի տվյալների վերլուծություն
- Պատրաստել կազմակերպության գործունեության կանոնավոր հաշվետվություններ և այլ հրապարակումներ՝ ապահովելու կազմակերպության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը
- Աջակցել ֆոնդահայթայթման բաժնին՝ բարերարների ու նվիրատուների հետ հարաբերությունների կառուցմանն առնչվող բովանդակության ստեղծման հարցում
- Օգնել միջոցառումների կազմակերպմանը

Պահանջվող որակավորումներ և հմտություններ

- Առնվազն բակալավրի աստիճան
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ հասարակայնության հետ կապերի և/կամ միջոցառումների կազմակերպման ոլորտում
- Սոցիալական մեդիա-մարկետինգի հիմնական գիտելիքներ
- Բովանդակային մարկետինգի հիմնական գիտելիքներ
- Բրենդինգի/հասարակայնության հետ կապերի հիմնական գիտելիքներ
- Լեզվական գերազանց հմտություններ (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
- Լուսանկարչության, տեսագրության և տեսամոնտաժի հմտություններ (ցանկալի է)
- Adobe Photoshop, Lightroom և Premiere Pro ծրագրերի իմացություն (ցանկալի է)

Դիմելու կարգ

1. Դիմեք մեզ նամակով՝ պատասխանելով հետևյալ հարցին՝ «Ինչո՞ւ հենց այս աշխատանքը և ինչո՞ւ հենց Դուք» (500 բառի սահմաններում):
2. Դիմումին կցեք Ձեր ինքնակենսագրությունը:
3. Առկայության դեպքում ներառեք դիմումում Ձեզ ներկայացնող որևէ կայքի/կայքէջի հղում (օր.՝ LinkedIn-ի Ձեր էջի):

Թեկնածուներին խնդրում ենք դիմումն ուղարկել vacancy@aybschool.am էլ. հասցեին հայերեն, ռուսերեն կամ անգլերեն և MS Word կամ Adobe PDF ձևաչափով: Նամակի բովանդակության տողում նշեք պաշտոնի անունը՝ **Communications Junior Specialist**: Հարցազրույցի փուլ անցած թեկնածուների հետ մենք կապ կհաստատենք հնարավորինս արագ: Խնդրում ենք չզանգահարել մեզ:

Հայտերն ընդունվում են մինչև 2019 թ. հունվարի 25-ը ներառյալ:

Կազմակերպության մասին

«Այբ» դպրոցը բյուրեղացումն է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող սերունդ ձևավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալու 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր: